# «Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստր ձևավորող և վարող իրավասու մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**„___ „ __________ 2020 թվականի N ___ Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐԻ ՌԵԵՍՏՐ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԵՎ ՎԱՐՈՂ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 6-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1.Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստր ձևավորող և վարող իրավասու մարմին ճանաչել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը:

2. Հանձնարարել՝

1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեքամյա ժամկետում Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի հետ համատեղ՝ արդյունաբերական ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ հաշվառել արդյունաբերական կազմակերպություններում առկա քիմիական նյութերը և խառնուրդները, որոնք գտնվում են շրջանառության մեջ կամ նախատեսվում է շրջանառության մեջ դնել Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում,

2) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել 2015-2020 թվականների կտրվածքով Հայաստանի Հանրապետություն ներմուծված և Հայաստանի Հանրապետությունից արտահանված քիմիական նյութերի և խառնուրդների վերաբերյալ տեղեկատվություն,

3) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝ քիմիական նյութերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կոնվենցիաների իրականացմանն ուղղված ֆինանսական մեխանիզմների միջոցով տեխնիկական և ֆինանսական աջակցություն հայցել Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ստեղծման համար։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։